ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԱՄՆ՝ ԳԵՐԱԳՈՒՅՆԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

1987 թվականի դեկտեմբերի 4—12-ը Միացյալ Նահանգների Քրիստոսի Եկեղեցու Ազգային Խորհրդի (ՔԵԱԽ) հրավերով ԱՄՆ-ում էր գտնվում Սովետական Միության Եկեղեցիների պատգամավորությունը: ՔԵԱԽ-ի ընդհանուր քարտուղար դոկ. Արի Բրաուերի ուղարկած հրավերը առաջարկում էր Սովետական Միության և ԱՄՆ-ի Եկեղեցիների միասնական հինգ-օրյա աղոթք՝ այդ օրերին Վաշինգտոնում տեղի ունեցող Գերագույնի հանդիպման հաջողության համար:

Սովետական Միության Եկեղեցիների պատվիրակության կազմի մեջ էին. Ռուս Պրավոսլավ Եկեղեցուց՝ Պատրիարքարանի արտաքին գործերի բաժնի վարիչ՝ պատգամավորության ղեկավար, Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետը, Սերպուխովի եպիսկոպոս Կլիմենտը, իգումեն Նիկանդրը՝ Կովալենկո, ավագ սարկավագ Վլադիմիր Նազարկինը և թարգմանիչ Վ. Վ. Մախնևը: Հայ Առաքելական Եկեղեցուց՝ Մայր Աթոռից դիվանապետ գեր. Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, Վրաց Պրավոսլավ Եկեղեցուց՝ Սուխումիի և Աբխազիայի միտրոպոլիտ Դավիթը, Լատվիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու արքեպիսկոպոս Էրիկ Մեստերսը և Էստոնիայի Ավետարանական-Լութերական Եկեղեցու արքեպիսկոպոս Կուլոն Պայուլան:

Դեկտեմբերի 5-ին Սովետական Միության Եկեղեցիների պատգամավորությունը այցելեց Վաշինգտոնում ԱՄՆ-ի Եպիսկոպոսական Եկեղեցու Մայր տաճար, որտեղ մասնակցեց գիշերային խոկումին: Հաջորդ օրը, ժամը 16-ին, Մայր տաճարում սկսվեց հանդիսավոր էկումենիկ արարողությունը, որը գլխավորեց Վաշինգտոնի Եպիսկոպոսական Եկեղեցու եպիսկոպոս Ջոն Ուոքերը: Այս էկումենիկ աղոթքին մասնակցեցին Սովետական Միության Եկեղեցիների պատգամավորության բոլոր անդամները: Հաջորդ օրերին Ազգային Մայր տաճարում ամեն օր աղոթքներ էին տեղի ունենում, որոնց մասնակցում էին մեկական ներկայացուցիչներ ԱՄՆ-ից և Սովետական Միությունից: Դեկտեմբերի 7-ին վերոհիշյալ տաճարի ժողովասրահներից մեկում կայացավ մամուլի ասուլիս Ամերիկայի և արտասահմանի մամուլի ներկայացուցիչների համար, որին մասնակցեցին միտրոպոլիտ Ֆիլարետը, Ներսես արքեպս. Պոզապալյանը, միտրոպոլիտ Դավիթը, դոկ. Արի Բրաուերը, ՔԵԱԽ-ի փոխնախագահ Ռենա Յոկան և Ջոան Կազիվարդան: Միտրոպոլիտ Ֆիլարետը և Արի Բրաուերը ելույթ ունեցան թղթակիցների առջև, որտեղ ի մասնավորի հայտնեցին այն միասնական ուղերձի մասին, որն ուղարկվել է երկու պետությունների ղեկավարներին: Ինչպես հայտնի է, դեկտեմբերի 8-ին Սպիտակ Տանը տեղի ունեցավ միջին և մոտ տարածության հրթիռների վերացման պայմանագրի ստորագրումը Մ. Գորբաչովի և Ռ. Ռեյգանի կողմից: Սա պատմական աննախադեպ քայլ էր համաշխարհային խաղաղության ճանապարհին:

ԹՂԹԱԿԻՑ